

Հաղթանակ Victoire

HAGHTANAG
LA VICTOIRE
7 Janvier 2009,
No 2 - Թիւ 2
ՅԱՂԹԱՆԱԿ
7 Յունուար 2009,

ԴԷՊԻ ՅԱՂԹԱՆԱԿ—TEBI HAGHTANAG—périodique— bulletin d'information

ՇՆՈՐՀԱԻՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ 2009 ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ.

Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ Ձեզի եւ Մեզի Մեծ Աւետիս.

2009 : Նոր տարի մը եւս թելակոխեցինք :

Ամէն տարիներու նման, ակնկալութիւններու, յոյսերու եւ որոշումներու տարի մը : Ամէն ջանք ի գործ պիտի դրուին իրականացնելու համար երազները : Հասնելու համար նպատակներուն :

Բայց արդիւնքը ընդհանրապէս միայն կախեալ չէ մեր ոյժերէն : Արտաքին տուեալներ կու գան ազդելու լուծումներու ընթացքին վրայ : 2009ի ուղիներն ու ազդեցութիւնները նախագծուած են համաշխարհային համակարգի եւ անոր շահակիցներու հզօրացման նպատակով : Ընտրուած-Նախագահ Պարաք Հիւսէյն Օպամա մի քանի օրէն պիտի ստանցեն Ամերիկեան Միացեալ Նահանգներու եւ

«Աշխարհի Ոստիկան»ի պաշտօնները, որոնք նոյնացած են Խորհրդային Միութեան փուլուզումէն ի վեր : Արդե՞օք Օպաման պիտի յարգէ իր նախընտրական խոստումները եւ հետանայ Իրաքէն, ուր առօրեայ պայթումներու զօհերը կու գան հաստատելու թէ, ԱՄՆերու հասկացողութեամբ ժողովրդավարութիւնը, որ կոչուած է ամրապնդելու իրենց արտաքին քաղաքականութեան եւ դաշնակիցներուն շահերը, տակաւին երկար համբայ ունի կտրելիք, մարդկութեան օրրան եւ քաղաքակրթութիւններու ոստան նկատուած Միջագետքի մէջ : Ի՞նչ դեր պիտի ունենայ Պաղատի ԱՄՆերու նորակառոյց դեպքնատուները Միջին ու Կեդրոնական Ասիոյ, կազատարներու եւ քարիւղատարներու հսկողութեան եւ ապագային իրականացուելիք ծրագիրներու մշակման մէջ : Ան ի՞նչ դեր պիտի ունենայ Իրանի հիւլեական ծրագիրներու հսկողութեան մէջ : Ան ի՞նչ դեր պիտի ունենայ Արաբական թերակղզիի եւ Մոցի երկիրներուն «դեպի ժողովրդավարութիւն» ռազմավարութեան մէջ :

Աչալուրջ պիտի լսենք Օպամայի 24 Ապրիլին արտասանելիք նառը : Արդե՞օք ան պիտի յարգէ իր խոստումը եւ նանչնայ Հայոց Ցեղասպանութիւնը :

Արդե՞օք Հայաստանի Հանրապետութիւնը պիտի յարգէ Եւրոպական Խորհուրդի Խորհրդարանական ժողովի ցուցմունքները, պաշտպանելու համար իր դիրքն ու վարքը Եւրոպական կառոյցներէն ներս : Այդ ցուցմունքները կը վերաբերին մարդկային իրաւունքներուն, խօսքի եւ արտայայտութեան ազատութեան, համախմբումի իրաւունքներուն եւ լրատուական միջոցներու եւ ցանցերու ազատութեան նախնական սկզբունքներուն : Եւրոպայի հայերու ակնկալութիւնը մեծ է Հայաստանի Հանրապետութեան գործադիր մարմիններէն, Հանրապետութեան Նախագահէն մինչեւ առաջին կարգի պաշտօնատարը : Անոնք պարտին յարգել ժողովուրդին պահանջքը եւ պետքերը, անոր բարօրութեան եւ ընկերային բարելւման համար : Այս գրաւականներու իրագործմամբ է որ միայն կարելի պիտի ըլլայ արտաքին ներդրումները բազմացնել, որուն արդիւնք, ձեռնարկութիւններ կրնան հաստատուիլ եւ մարդոյժի կարիքով արտահոսքը նուազեցնել : Աշխատանքի կարելիութիւնը քիւղատնտեսական մարզին մէջ կը կասեցնէ զաղբը դեպի քաղաք եւ մայրաքաղաք, գարկ տալով ծննդավայրին, հողին : Հողը, առաջինը պաշտպանողը, Հողին տէրն է, Հողին վրայ ապրողը :

Արդե՞օք Մարտ 1, 2008ի ահռելի արարքները, մարդասպանութիւնը, ոհմորը, հայու ձեռքով հայ սպանելու ամօթը, պիտի հասնի իր վերջաբանին եւ յանձնարները, ինչպէս նաեւ անոնց հրամայողները բացայայտուին եւ պատճառուին : Եթէ դատական կառոյցները իսկապէս ազատ են գործադիր մարմիններէն, այդ ընելը դժուար պետք չէ ըլլայ, օգտուելով տեսերիզներէ, որոնք ամենայն յստակութեամբ երեւան կը հանեն մարդասպաններու ինքնութիւնները :

Արդե՞օք Ֆրանսական Ծերակոյտը առիթը պիտի ունենայ բանավիճելու եւ կամ ուղղակի գուեարկելու Հայկական Ցեղասպանութեան ժխտողական օրէնքի մը նախագիծը, հետեւելով Ազգային ժողովի գուեարկութեան : Արդե՞օք Կառավարութիւնը ննջում պիտի բանեցնէ Ծերակուտականներուն վրայ, արգելք հանդիսանալով օրէնքի նախագիծին օրակարգի վրայ արձանագրուելուն, «չխափանելու համար ֆրանքօ-թրքական յարաբերութիւնները» : Ի՞նչ պիտի ըլլայ պատմաբաններուն դիրքը :

Արդե՞օք Թուրքիա-Հայաստան «ֆուլպօլի դիւանագիտութիւն» մրցումին երկրորդ «կիսախաղը» պիտի յանգի իր նպատակին՝ արգելք հանդիսանալով «երրորդ» կողմի մը միջամտութեան կամ «հրաւարութեան», քանի «խաղը» լաւ ընթացքի մէջ է : Ֆուլպօլի մրցումի հրաւեր, երկխօսութիւն, սահման, անօրէն կարգավիճակով հայաստանաբնակներ Թուրքիոյ մէջ, Արցախեան հիմնահարց, Սփիւքը, Ցեղասպանութիւն : Հայկական սփիւքը ըլլալով Հայոց Ցեղասպանութեան շտապիկները, պետք է մասնակցի երկխօսութեան գործընթացին : Թուրքիոյ նախապայմանները անընդունելի են : Հայկական կողմն է որ պետք է ներկայացնէ նախապայմանները երկխօսութեան գործընթացը սկսելէ առաջ : Երբի «խաղին» արդիւնքը ծանօթ է : Յուսամ դարձի արդիւնքը նպատակաւոր ըլլայ ՀԱՅՈՑ շահերուն : Թուրքիոյ ռազմավարութիւնը կը հետապնդէ երկու նպատակ. արգելք հանդիսանալ Հայոց Ցեղասպանութեան նանչման եւ անոր ուրացման դեմ օրէնքներու որդեգրման եւ օգտագործելով երկխօսութեան ոլորտը աստիճանաբար բանալ Եւրոպայի դարպասները : Եւրոպայի հայերս պետք է պատրաստ ըլլանք Եւրոպական ընտրութիւններու պայմանաժամերուն : Մենք թուրքին լաւ կը նանչնանք : Մեր արեան զնով վնասեցինք այս ծանօթութիւնը : Փաստ Ատանայի կոտորածը : 1909-2009 :

Արդե՞օք հայկական սփիւքեան կառոյցները, ըլլան անոնք կուսակցութիւններ, քաղաքական խմբաւորումներ, միութիւններ, ընկերակցութիւններ, ըլլան անոնք մշակութային թէ մարզական, ըլլան անոնք խնամակալական թէ ընկերային ծառայութեան, ըլլան անոնք մամուլ թէ համացանց, վերջապէս հասան այն հասկացողութեան, թէ պետք է ազգային շահը դասել անելի բարձր քան հատուածայինը : Երբեմնի հայ մշակույթի գաղթօճախ, Միջին Արեւելեան հայահոծ երկիրներէն, Լիբանանը, կը դիմագրաւէ երեսփոխանական նախընտրական շրջան մը : Տեղույն ղեկավարները թող աչալուրջ ըլլան եւ յետագարձ նայուածք մը նետեն անցեալի սխալներուն եւ հայու շահերէն մեկնելով դիրքորոշուին եւ բանակցին : Գաղութը նօսրացած է : Դպրոցներու թիւը նուազած : Մամուլի անունները անհետացած : Ուշադիր եղէք վնասելէ առաջ, Պատմութիւնը ձեզ պիտի դատէ :

Արդե՞օք Հայաստանի Ազգային ժողովի մարդասպաններուն դատը չկոխած իր 10րդ տարին պիտի յանգի յստակ բացատրութիւններու, անուանելով զլիաւոր մարդասպան-յանձնատու-որոշողը : Ո՞վ է ան : Ովքե՞ր են անոնք : Որո՞ւն շահերը կը պաշտպանեն : Ո՞վ կը պաշտպանէ իրենց : Որո՞ւն շահերուն կը նպաստէ տկար Հայաստան մը : Արդե՞օք այս թղթածրարը Ազգային

Անվտանգութեան անդորոտութեան համար պիտի կրէ «ԽԻՍՏ ԳԱՂՏՆԻ» պիտակը եւ մնայ դիւանաբուրդներու մէջ, հեռու յայտնաբերումներէ : Բայց, «Ո՛ւր կ'երթաս ժողովրդավարութիւն» :

Թող 2009ը ըլլայ այս մի քանի հարցումներուն, պատասխաններ բերող տարի մը :

ԽՕՍԶ ԱՍԱՆՈՐԻ ԱՌԹԻ

Տարի մը եւս անցաւ պատմութեան ու մարդկութիւնը կը պատրաստուի դիմագրաւելու նոր տարին, մաղթելով որ ան իր հետ կը բերէ աւելի լաւ ու փայլուն օրեր երկրագունդի ժողովուրդներուն համար:

2008 տարին յատկանշուեցաւ միջազգային ֆինանսական անկումով, որ տարածուելով աշխարհով մէկ, կը սպառնայ ոչ միայն աղքատ երկիրներուն, աւելիով նաեւ հարուստ նկատուող պետութիւններուն ու անոնց ժողովուրդներուն:

Տնտեսական ամբողջ համակարգ մը, որ ցարդ կը նկատուէր ամենէն «ապահովը» ներկայիս կը գտնուի քայքայման եզրին, իսկ շուտափոյթ առաջարկուած լուծումներն ու դեղատոմսերը տակաւին հեռու կը մնան անկախուած արդիւնքները տալէ:

Համաշխարհային ճգնաժամը սկսած է ազդել նաեւ Հայաստանի վրայ, ուր ժողովուրդի կենսամակարդակի նոր անկում մը կրնայ աղետալի հետեւանքներ ունենալ մեր ազգին համար:

Տնտեսական տագնապը կու գայ աւելնալու Հայաստանի ու Հայ ժողովուրդի ներկայիս դիմագրաւած բազմաթիւ հարցերու երկար շարքին վրայ: Նախագահական կեղծուած ընտրութիւնները ու անոր յաջորդած ներքաղաքական անկայունութիւնը, քաղաքական բանտարկեալներու առկայութիւնը, Մարտ 1-ի սպանող, Տեղասպանութիւնը հարցականի տակ առնող կեցուածքները, թուրքիոյ հետ յարաբերութիւններու գծով կատարուող զիջումները, Ղարաբաղեան հարցի գծով առաջարկուող ոչ հայանպաստ լուծումները կը շարունակեն խորացնել անջրպետը ոչ միայն հայրենիքի իշխանութիւններուն ու ժողովուրդին միջեւ, այլ նաեւ Սփիւռքահայութեան հետ, որ կորսնցուցած է հաւատքը Հայաստանի այսօրուայ դեկլարութեան նկատմամբ:

Վերոյիշեալ հարցերը յաջողութեամբ դիմագրաւելու համար, ներկայիս, ամեն ժամանակէ աւելի մենք կը կարօտինք միասնականութեան ու համախմբուածութեան՝ երկրէն ներս թէ դուրս:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը կը հաւատայ, որ Հայաստան եւ սփիւռք կը կազմեն մեր ժողովուրդի երկու թելերը, որոնց ներդաշնակ գործակցութեամբ պայմանաւորուած է մեր ազգի գոյութիւնն ու մարտահրաւերները յաղթահարելու կարողութիւնը: Այս ուղղութեամբ մենք պիտի շարունակենք ընել մեր կարելին, որպէսզի Հայաստանը դառնայ ազատութեան, արդարութեան, հաւասարութեան ու ժողովրդավարութեան երկիր, վերագտնէ իր ներքին անդորրը, ժողովուրդը կառչի իր հողին ու վերահաստատուի վստահութիւնը ազգի բոլոր հատուածներուն միջեւ:

Կը յուսանք, որ նոր տարին այս անգամ մեր հայրենիքին եւ աշխարհատարած ողջ հայ ժողովուրդին կը բերէ դրական նորութիւններ ու մենք, աւելի ինքնավստահ ու ճակատաբաց կը շնորհաւորենք զիրար՝ յաջորդ բոլոր ամանորներուն:

Ս.Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԴԵԿՏԵՄԲԵՐ 29, 2008

VŒUX DU NOUVEL AN

Nous prenons congé de l'année passée et l'humanité toute entière se prépare pour accueillir le Nouvel An, qui espérons-le, apportera des jours meilleurs aux Peuples.

2008 restera dans les mémoires comme l'année de la chute des marchés internationaux financiers qui menace toutes les sociétés, tous les états.

Tout un système économique, dite « sûr », est au bord de la faillite, et les remèdes hâtifs restent inefficaces.

La crise mondiale a touché aussi l'Arménie, et une baisse, même minime du pouvoir d'achat, peut avoir des conséquences catastrophiques sur la nation.

L'Arménie, ainsi que le peuple arménien, subissent cette crise économique qui vient s'ajouter aux problèmes existants : les élections présidentielles frauduleuses, l'instabilité intérieure, les prisonniers politiques, la tuerie du 1^{er} mars, la mise en question du Génocide des Arméniens, les concessions faites à la Turquie, les propositions anti-arméniennes pour la question du Haut-Karabagh, renforce le fossé creusé entre les autorités et le peuple, mais aussi la diaspora, qui, déçu, perd toute confiance envers les dirigeants en place.

Pour faire face et gagner ces combats, nous avons besoin d'une unité nationale.

Le Parti Social-Démocrate Hentchakian croit, que seule une collaboration concertée et harmonieuse entre les deux composants du peuple arménien, l'Arménie et la Diaspora, permet de survivre et réussir. Nous continuerons à œuvrer pour que l'Arménie devienne n pays de liberté, de justice, d'égalité et un pays démocratique, pour que la paix et la confiance règne.

Nous espérons que le Nouvel an soit positif pour toute la nation arménienne, en mère-patrie et en diaspora, et désormais confiant et rassuré avançons vers l'avenir.

Comité Central
Parti Social-Démocrate Hentchakian
29 décembre 2008

«ՀՆՉԱԿԻ» ՀԱԻԱՔԱԾՈՆ ՄԻՇԻԿԸՆԻ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՅՔԷՋԻՆ ՎՐԱՅ

Le mensuel « HENTCHAK »
sur le site-web de l'Université de
MICHIGAN



La faculté des Etudes Arméniennes de l'Université de MICHIGAN (Etats Unies), a publié un communiqué pour informer de la mise en ligne, sur le site de l'Université, la collection de « HENTCHAK » l'organe mensuel officiel du Parti Social-Démocrate HENTCHAKIAN.

Le numéro 1 de « HENTCHAK » est publié en 1887, à Genève .

Sur le site ont peut trouver les publications de 1887 à 1915.

Le communiqué rappelle que la recherche et la numérisation ont été possibles grâce à la collaboration de la Bibliothèque Nationale d'Arménie, l'Association Culturelle Nor Serount et le Parti Social-Démocrate Hentchakian.

Le 31 octobre dernier, la faculté des Etudes Arméniennes de l'Université de Michigan avait mis en ligne les archives de ARZOUMANIAN Hampartsoum, le dirigeant du Parti Social-Démocrate Hentchakian en Iran.

Vous trouvez les détails sur <http://www.umich.edu>, onglet: [academic/resources](#).

Միշիկընի Համալսարանի Հայագիտական Ծրագիրը Դեկտեմբեր 18-ին հրապարակուած հաղորդագրութեամբ մը եկաւ յայտարարելու թէ, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան առաջին պաշտօնաթերթ՝ «Հնչակի» հաւաքածոն գետեղուած է Համալսարանի ինթըրնէթի կայքէջին վրայ:

»Հնչակի« առաջին թիւը լոյս տեսած է 1887 թուականին, ժընեւի մէջ:

Կայքէջի վրայ գետեղուած է թերթի 1887-1915 թիւերը:

Հաղորդագրութիւնը կը յայտնէ որ, «Հնչակի» հաւաքածոյի հաւաքագրումը կարելի եղած է ապահովել Հայաստանի Ազգային Գրադարանի, Նոր Սերունդ Մշակութային Միութեան եւ Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան հետ համագործակցաբար:

Յիշեցնենք որ, անցեալ Հոկտեմբեր 31-ին Միշիկընի համալսարանի Հայագիտական Ծրագրի ճախարանութեամբ տեղի ունեցած էր Պարսկաստանի մէջ Հնչակեան զործիչ Համբարձում Արզումանեանի արխիւներու, ինթըրնէթային կայքէջի վրայ բացման արարողութիւնը:

Հնչակի թիւերուն ծանօթանալու համար կարելի է այցելել <http://www.umich.edu/~iinet/asp/> էջը եւ մտնել [academic/resources](#) բաժինը:

ԴԷՊԻ ՅԱՂԹԱՆԱԿ-TEBI HAGHTANAG-LA VICTOIRE
Périodique—bulletin d'information
Խմբագրական Կազմ-REDACTION
BADEM Chaké, BADEM Kegham, BEDIK David,
HOVAKIMIAN Hovakim, SILAHLI Saro, SIRADAG Aren
TASCIOGLU Alex, SATCHLIAN Kévork
HAGHTANAG
c/o CJA, Place ACHTARAK, 2-2Bis Bd Carnot,
94140 ALFORTVILLE
Tél: 01 43 76 14 45 www.haghtanag.fr

— Avez-vous réservé votre **Calendrier 2009**
du Centre de Jeunesse Arménien?

Les fêtes arméniennes, les jours fériés et les adresses utiles
y sont répertoriés. Prix : 5 €

DATES A RETENIR :

— **10 janvier 2009 SOIREE DU NOEL ARMENIEN**

GAIDZ- Nor Serount Association Culturelle présente le Samedi,
10 Janvier 2009, la SOIREE DU NOEL ARMENIEN sur le Bateau
« PLAY TIME », 6, quai Jean Compagnon, 94200 IVRY s/ SEINE
Réservations & Renseignements : www.gaidz.fr
Tél: 0624781559 & 0628524837

— **16 janvier 2009 CONFERENCE DEBAT**

Sur le thème du dialogue arméno-turque, à l'occasion de la deuxième
commémoration de l'assassinat de Hrant Dink. Avec la participation de
Ara SARAFIAN, historien et Aysé HUR, historienne-journaliste. Co-
organisé par l'association Sourp Khatch TEBREVANK, l'Ecole HRANT
DINK, et NAZARPEK Jeunesse HENTCHAKIAN. Vendredi, 16 janvier
2009, à 20:00, à l'Ecole Hrant Dink, 40-42 rue Saint Just, 95400
Arnouville-Lès-Gonesse
Pour information Tel: 0612750531 et www.nazarpek.fr

PROCHAINEMENT

— avril 2009 Conférence-débat avec la participation d'un historien

— avril 2009 Requiem Nazareth PECHDIKIAN